ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

Թեստի կառուցվածքը

«Կենսաբանություն» առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննական թեստերում ընդգրկված են առարկայական ծրագրի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ:

Թեստը բաղկացած է 35 առաջադրանքից, որոնք, ըստ առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

Աղյուսակ 1

Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Հ/h	**Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի**	Առաջադրանքների քանակն ըստ մասերի	Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների
1.	**ընտրովի պատասխանով**	22	22
2.	**կարճ պատասխանով**	10	10
3.	**ընդարձակ պատասխանով**	3	3
	ընդամենը	**35**	**35**

Աղյուսակ 2

Առաջադրանքների բաշխումն ըստ ծրագրային նյութի բաժինների

Հ/h	**ԹԵՄԱ**	**ՄԻԱՎՈՐԸ**
1.	Կենդանի օրգանիզմների բազմազանությունը	7
3.	Մարդ	11
4.	Ընդհանուր օրինաչափություններ	17
	Ընդամենը	35

Առաջադրանքների բաշխումն ըստ ստուգվող գործունեության տեսակների

Կենսաբանության թեստի բովանդակության ընտրությունը պայմանավորված է հետևյալ կարողությունների ստուգման անհրաժեշտությամբ.

- կենսաբանական պրոցեսների և երևույթների անվանում,
- կենսաբանական պրոցեսների և երևույթների հաջորդականության իմացություն և պարզաբանում,
- կենսաբանական երևույթների և կենսահամակարգերի կառուցվածքի ու ֆունկցիայի միջև պատճառահետևանքային կապերի համապատասխանության որոշում,
- կենսաբանական պրոցեսների և երևույթների վերլուծում,
- կենսաբանական խնդիրներ լուծելու ունակություն,
- տրամաբանական մտածողություն և ստեղծագործական ներուժ:

Քննական առաջադրանքների գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-22-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (23-32-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները երեքն են (33-րդ, 34-րդ, 35-րդ): Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կենսաբանության թեստի առաջադրանքների նմուշներ

1. Ընտրովի պատասխանով առաջադրանք

Ո՞ր բույսն է բազմանում սպորներով:

1) սոճին
2) պտերը
3) ձմերուկը
4) եգիպտացորենը

2. Կարճ պատասխանով առաջադրանք.

Քանի՞ ողից է բաղկացած մարդու ողնաշարի կրծքային բաժինը:

Պատասխան՝_____

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննության տևողությունը 120 րոպե է:
Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար:
Ընտրովի պատասխանով առաջադրանքների համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 2 հնարավորություն: Կարճ պատասխանով առաջադրանքների համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 1 հնարավորություն: